

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ Ներսես Տեր-Վարդանյանի՝ ս.թ. հոկտեմբերի 11-14-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ Ներսես Տեր-Վարդանյան

- **ՔԱՂԱՔ /ԵՐԿԻՐ/ԺԱՄԿԵՏ**

Ֆրանկֆուրտ (Գերմանիայի Դաշնային Հանրապետություն), հոկտեմբերի 11-14-ը

- **ՆՊԱՏԱԿԸ**

- Մասնակցություն Ֆրանկֆուրտի գրքի միջազգային տոնավաճառին
- ՀՀ մշակույթի նախարարության «Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագրի շնորհանդես:

Ս. թ. հոկտեմբերի 11-14-ը մեկնեցի Ֆրանկֆուրտ՝ մասնակցելու Ֆրանկֆուրտի գրքի տոնավաճառին, ուր Հայաստանը ներկայացված էր առանձին տաղավարով: Ֆրանկֆուրտյան ցուցահանդեսի հայկական տաղավարը ներկայացնելու, արտերկրի հրատարակիչներին իրենց արտադրանքը ցուցադրելու համար Ֆրանկֆուրտ էին ժամանել «Անտարես», «Ձանգակ», «ԵՊՀ», «Արևիկ», «Բուկինիստ» հրատարակչությունները, «Առաջին» և «Արի» գրական գործակալությունները:

Ֆրանկֆուրտի՝ գրական աշխարհում ամենահեղինակավոր և ծավալով ամենամեծ տոնավաճառին Հայաստանի՝ ավանդական դարձած մասնակցությունն այս տարի ընդառաջ էր Հայաստանի առաջին հանրապետության 100 և Էրեբունի-Երևանի 2800-ամյակների հոբելյաններին, ուստի այս ցուցահանդեսին հայկական տաղավարը ներկայացավ ինչպես ՀՀ մշակույթի նախարարության պատվերով ու աջակցությամբ, այնպես էլ մասնավոր հրատարակչությունների նախաձեռնությամբ վերջին տարիներին Հայաստանում և արտերկրում հրատարակված Հայաստանի պատմությունը և մշակույթը ներկայացնող գեղարվեստական, մանկապատանեկան և ալբոմային, ինչպես նաև թեմատիկ այլ գրականությամբ:

Հոկտեմբերի 11-ին հանդիպումներ ունեցա գրական-թարգմանական ծրագրեր ունեցող տարբեր երկրների ներկայացուցիչների հետ (Լիտվա, Լատվիա, Լեհաստան, Արգենտինա, Ուկրաինա, Իրան, Գերմանիա, Շվեդիա, Իռլանդիա): Պայմանավորվեցինք քայլեր ձեռնարկել միմյանց թարգմանական ծրագրերի վերաբերյալ տեղեկացման ուղղությամբ: Մասնավորապես՝ առաջիկայում Երևանյան գրքի փառատոնի ընթացքում այդ երկրների դեսպանությունների մասնակցությամբ կներկայացվեն իրենց լեզուներից հայերեն

թարգմանությանն օժանդակող ծրագրերը, իսկ այդ երկրների հիմնադրամներն էլ իրենց հրատարակիչներին կտեղեկացնեն հայերենից այլ լեզուների թարգմանության օժանդակության վերաբերյալ գոյություն ունեցող դրամաշնորհային ծրագրի մասին:

Նույն օրը երեկոյան հանդիպումներ ունեցա նաև Ֆրանկֆուրտի գրքի միջազգային ամենամյա տոնավաճառի փոխտնօրեն Թոբիաս Վոսի, արևելյան երկրների հետ կապերի պատասխանատու Վլադկա Կուպսկայի հետ:

Ինչպես յուրաքանչյուր տարի, այս անգամ ևս ադրբեջանցիների կողմից փորձ արվեց քաղաքականացնել զուտ մշակութային այս հարթակը: Հոկտեմբերի 12-ին Հայաստանի տաղավար մտան երկու ադրբեջանցի, վերջին գրադարակին ծավալած վիճակում դրված Հայաստանի և Արցախի մի քանի քարտեզ և Արցախի թեմայով քաղաքական վանկարկումներով դրանք տարան իրենց հետ: Պատվիրակության անդամներից մի քանիսը հետևեցին նրանց մինչև իրենց տաղավար, և ես իրենց տաղավարում արդեն ուժով ետ վերցրեցի քարտեզները: Անշուշտ այս մասին տեղեկացրի ցուցահանդեսի անվտանգության ծառայությանը և ոստիկանությանը, ցուցահանդեսի փոխտնօրեն Թոբիաս Վոսին և այլ պատասխանատուների: Ոստիկանությունն արձանագրեց կատարվածը և խոստացավ միջոցներ ձեռնարկել: Ցուցահանդեսի ղեկավարությանն առաջարկեցի կազմակերպել համատեղ քննարկում ադրբեջանական տաղավարի պատասխանատուի հետ, որպեսզի դեպքի մանրամասների մասին խոսելով՝ կանխենք հաջորդ նմանատիպ զարգացումները: Ինչպես և կանխատեսվում էր, ադրբեջանցիները հրաժարվեցին այս ձևաչափից:

Միջադեպը ոչ միայն լուսաբանվեց մեր մամուլում, այլև մեծ արձագանք ունեցավ նաև տեղի հայ համայնքի, ցուցահանդես-տոնավաճառին մասնակցող այլ երկրներ ներկայացուցիչների և լրատվամիջոցների շրջանում:

Հոկտեմբերի 13-ին հայաստանյան տեղավարում ներկայացրի ՀՀ մշակույթի նախարարության «Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագիրը: Ծրագրով աջակցություն է տրվում արտասահմանյան այն հրատարակչություններին, որոնք պատրաստ են իրենց երկրում իրենց լեզվով հրատարակել հայ դասական կամ ժամանակակից գրականություն: Դրամաշնորհային ծրագրին դիմելու պայմանների, ընթացակարգի և այլնի մասին արտասահմանյան հրատարակչություններին համակողմանի տեղեկատվություն տրամադրելու համար ստեղծվել է «Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագիրը ներկայացնող կայքէջ (<http://www.armlit.am>):

Շնորհանդեսի ավարտին հյուրերը հրավիրվեցին հայկական ուտեստների հյուրասիրության:

Նույն օրը երեկոյան հանդիպում ունեցա ձեռագրերի և հնատիպ գրքերի բարձրորակ կրկնօրինակներ (ֆակսիմիլներ) հրատարակող իսպանական հեղինակավոր կազմակերպության ղեկավարների հետ, ովքեր հետաքրքրված էին Հայաստան այցելելու և «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի հետ համագործակցելու հարցում:

Հանդիպեցի նաև Գերմանիայի Լայպցիգ քաղաքի գրքի ցուցահանդեսի ղեկավար պարոն Օլիվեր Ժիլյեի հետ՝ Լայպցիգի գրքի տոնավաճառի պայմաններին ծանոթանալու և հայաստանյան մասնակցությունը քննարկելու համար:

• **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

• *Հայաստանի տաղավարում ներկայացվեցին վերջին տարիներին պետական պարվերով, պետական աջակցությամբ և մասնավոր դաշտի կողմից հրատարակված գրքերը:*

• *Կայացավ ՀՀ մշակույթի նախարարության «Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագրի շնորհանդեսը:*

• *Փոխգործակցության պայմանավորվածություններ ձեռք բերվեցին տարբեր երկրների թարգմանական դրամաշնորհներ տրամադրող կազմակերպությունների հետ:*

• *Ֆրանկֆուրտի գրքի միջազգային ամենամյա տոնավաճառի, Լայպցիգի գրքի տոնավաճառի տնօրինությունների հետ հանդիպումների արդյունքում, ի թիվս այլ պայմանավորվածությունների, ձեռք բերվեց Հայաստանին հատուկ զեղչով տաղավար տրամադրելու համաձայնություն:*